

քրիստոնէական պարտքերը, տարակոյս չունենամք որ վեհափառ կայսեր հայրական խնամքն ալ ոչ երբէք պակաս կլինի մեր վրայէն. այլ եւ մեր հաւատարիմ հպատակութեան փոխարէն՝ առաւել եւս կարժանանամք Քրիստոսազօր Տէրութեան պաշտպանութեանը, եւ յառաջադիմութիւն կունենամք յամենայնի:

Զայս եւ ասոր հետ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարիք եւ յաջողութիւն կմաղթեմ ես այսօր բարեպաշտ ժողովրդականա-

ցըդ Սիմֆերոփոլի, կրկին եւ կրկին յանձնելով զձեզ առ համարակ սուրբ եւ անմահ պատարագիս առջեւը բարեխօսութեան Տիրամօր Կուսին, — որոյ անաւանը նուիրուածէ արգէն տաճարս, — եւ կինդրեմ յԱստծոյ որ սուրբ եկեղեցւոյս հովանաւորութեամբը պահուիք եւ պահպանուիք յամենայն երեւելի եւ աներեւոյթ փորձանաց մինչեւ որ հասնիք յօթեւանս Հօրն երկնաւորի, ընդ որում Քրիստոսի Փրկչին մերում եւ փառակից սուրբ Հոգւոյն վայելէ փառք յաւիտեանս . ամէն :

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

### ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԶՈՒՄԲՃԱԼԻ


ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

\* Արեւելեան տէրութեանց մէջ քիչ կրպատահի որ պաշտօնատէրները մէկմէկու հետ կոռւրտին. թագաւորներն ալ վարպետ են այնպիսի կուրուներուն շուտով առջեւն առնելու, վասն զի գիտեն որ անկից մեծամեծ վնասներ ու խռովութիւններ կրնան առաջդալ: Կըսեն թէ անգամ մը զինուորական ու քաղաքական պաշտօնատէրներուն մէջ վէճ մը եղեր է Պօլիս՝ թէ արքային հանդիսով տեղ մը գնացած ժամանակը որո՞նք ձախ կողմէն պիտի երթան եւ որո՞նք աջ կողմէն: Թագաւորը շուտ մը վէճը կդադրեցընէ՝ ըսելով թէ այսուհետեւ ձախ կողմը զինուորականաց համար պատուաւոր համարուի, իսկ աջ կողմը քաղաքական պաշտօնատեարց համար:

— Մերոնց մէջ պատահած հակառակութիւններուն արդեօք ով կրնայ այսպիսի վերջաւորութիւն տալ:

\* Խանութպանին մէկը առնելիք ունի եղեր ուրիշէ մը, ինքն ալ սաստիկ կարօտ լինելով ստըկի՝ իւր սպասաւորը կըրկէ որ առնելիքը պահանջէ: Սպասաւորը բժամիտ տղայ մը, կերթայ առաջ քաղաքավարութեամբ կուղէ առնելիքը, բայց կամաց կամաց կակսի վրայ տալ ու կոշտութեամբ խօսիլ. «Բաւական է, ախպար, կըսէ պարտատէրը, գիտես որ ես փախչելու չեմ: — Գիտեմ, աղա որ դուն չես փախչիր, բայց իմ տէրս կուղէ փախչիլ ու անոր համար ստակ հարկաւոր է իրեն:

\* Գաղղիոյ պատերազմներէն մէկուն մէջ 1884-ին Կիզ գ-քսին բանակէն Սէնֆալ զօրավարը չափազանց առաջ կլաղէ. դուքսը ետեւէն կընկնի ու նեղսրասութեամբ Սէնֆալն կզարնէ թրին կոնակովը ու կհրամայէ որ կենայ: Պատերազմէն ետքը կըսեն դըք-



Wm mason architect Edgbaston Birmingham



## УСПЕНСКАЯ АРИЯНСКАЯ ЦЕРКОВЬ

ВЪ СИМФЕРОПОЛЬ.

Перестроена и увеличена не устной деятельности Промо-  
щера и кавалера Якова Суренъянца, с добровольных  
пожертвований Армянъ сего города, колокольня же сооружена  
Мартиниосомъ Молдожанъ 1864 года.


սին թէ Սէնֆալը առնուեր է եւ կուզէ զօրավարութենէն հրաժարիլ. « Սէնֆալ, կըսէ անոր ուրիշ զինուորականաց առջեւը, չափաղանց առաջ անցնելուդ համար զքեզ զարկածէս առնուեր ես. բայց կարծեմ թէ լաւ է անոր համար զարնուիլդ որ չափաղանց եռանդովդ առաջ նետուեցար, քան թէ անոր համար զարնուէիր որ ուրիշներէն ետ մնացեր ես: Իմ կարծեօք այն իմ զարնուածքս քեզի աւելի պատիւ կբերէ քան թէ ամօթ. ուրեմն եկ հաշտուինք:

— Աղէկ մխիթարանք յառաջադէմ մարդկանց, եթէ զարնողին ձեռքը շարժողը ոչ ցած նախանձն է եւ ոչ ատելութիւնը:



\* Գաղղիացւոյն մէկը Անգղիացի զինուորի մը կուբքին վրայ արծըթէ մետալ մը կտեսնէ որ առած է եղեր Վաթեռլոյի պատերազմին համար: Ծալր ընելու մուքով կը հարցընէ անոր. « Ի՞նչ խելք է այս ձեր տէրութեան ըրածը որ երեք ֆրանքնոց բանով մը ուզեր է զձեղ վարձատրել: Անգղիացին հանդարտութեամբ կպատասխանէ թէ « Իրաւ է, մեզի համար աս երկու ֆրանք ալ չարժեր. բայց Գաղղիացւոց համար մէկ նափոլէոն մը կարծէ:

— Վարձատրութեան ներքին յարգը հոգին է, դրսի արժէքը ոչինչ:



\* Ինքզինքը գիտունի տեղ դրած խաթունին մէկուն առջեւը ընկերութեան մը մէջ խօսակցութիւն կլինի եղեր Ֆլորիանի գրուածքներուն վրայ. խօսքը կուգայ նորա նումա Պոմպիլիոս անունով գրքին (որ հայերէն ալ թարգմանուած է), եւ այն տեղ գըտնուողներուն մէկը գիտնալով այն խաթու-

նին գիտութեան չափը՝ կհարցընէ անոր թէ « Արդեօք այն գիրքը ի՞նչ կերպով կվերջանայ: — Ի՞նչպէս պիտի վերջանայ, կըսէ խաթունը. միթէ յայտնի չէ վիպասանութեանց ոճը. նուման Պոմպիլիոսին հետ կկարգուի, գիրքը կվերջանայ » :

— Մեր կէս գիտունները, մեր կիսեփեաց ճակնդեղները ասոր նման վճիռներ որքան կուտան իրենցմէ տգէտներուն առջեւը:

—————

\* Տղուն մէկը լուացուելու կերթայ, եւ լողալ չգիտնալով՝ քիչ կմնայ որ պիտի ընկըզմի եղեր: Ուրիշներուն այս փորձանքը պատմելու ատեն կըսէ թէ այսուհետեւ մինչեւ որ լողալ չսովորիմ՝ ջուր մտնելու չեմ:

— Տգիտութիւնը երեք տեսակ է. բան մը չգիտնալ, գիտցածը գէշ գիտնալ, եւ պէտք չեղած բանը գիտնալ: Արդեօք աշխարհիս մէջ այս երեք տեսակ տգիտութեան որը աւելի շատէ: — Ոմանք կըսեն թէ առաջինն է. բայց շատը կարծեն թէ երկրորդ եւ երրորդ տեսակները առաջիններէն շատ աւելի են, ինչպէս նաեւ շատ աւելի վնասակար:

—————

\* Օր մը մարդուն մէկը նասրէտտին հօճային ապտակ մը կզարնէ. հօճան կերթայ գատըին՝ այսինքն գատաւորին գանգատ կընէ: Դատաւորը գիրքը կիջեցընէ կնայի, « Ապտակ զարնողը ապտակը ուտողին մէկ փող պիտի վճարէ » կըսէ: Հօճան կմօտենայ գատաւորին քովը, մէկ ապտակ մը կիջեցընէ անոր, ու « Գնա այն փողը քեզի առ » կըսէ:

— Անկատար կամ անիրաւ օրինաց աղէկ յանդիմանութիւն:

